Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
փետրվարի 19-ի նիստի N 7
արձանագրային որոշման

«ՀԱՅՓՈՍՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՀԱՅՓՈՍՏ ՀՅՈՒՍԻՍ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

1. Նախաբան

Հայաստանի Հանրապետության կառավարության և «ՀայՓոստ Թրասթ Մենեջմենթ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2006թ.-ի նոյեմբերի 30-ին կնքվել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերով հավաստված իրավունքների հավատարմագրային կառավարման մասին պայմանագիր, որի անբաժանելի մասն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 30.11.2006թ-ի թիվ 42 արձանագրային որոշմամբ Կառավարության հավանությանն արժանացած «ՀայՓոստ» փակ բաժնետիրական ընկերության Հավատարմագրային կառավարչի գործունեության ծրագիրը (այսուհետ նաև՝ Ծրագիր):

Վերը հիշատակված Ծրագրում ներկայացված են «ՀայՓոստ» ՓԲԸ-ի զարգացմանն ու տնտեսապես կայուն և առաջատար փոստային կապի օպերատոր դառնալուն ուղղված գործընթացների ամբողջությունը, ներառյալ տարբեր ուղղություններով փոստային կապի ցանցի արդիականացմանն ուղղված ներդրումները, այդ թվում՝ փոստային կապի օբյեկտների վերանորոգումներին ու նոր՝ տեխնոլոգիապես արդիական փոստային կապի օբյեկտների կառուցմանն ուղղված ներդրումները:

Փոստային գործառույթների արդյունավետ կազմակերպման ու կառավարման նպատակով Հավատարմագրային կառավարչի գործունեության ծրագրի իրագործման շրջանակներում, Հայփոստը, վերջին երկու տարիներին իրականացնում է փոստային ցանցի տարածքային կառավարման մոդելի վերակազմավորում, ինչպիսի գործընթացի հիմքում դրված են նախ և առաջ փոստային երթուղիների և գործառույթների կազմակերպման պլանավորված փոփոխությունները: Փոստային ցանցի տարածքային կառավարման նոր մոդելի ներդրման շրջանակներում նախատեսվում է փոստային կապի բաժանմունքների աշխատանքների կազմակերպումը խոշոր փոստային կենտրոններից, որոնք իրենց բնույթով հանդիսանալու են փոստային առաքումների և դրամական միջոցների փոստային փոխադրությունների, ինչպես նաև վարչական և այլ գործընթացների կենտրոնացված կառավարման խոշոր հանգույցներ: Նման հանգույցների տարածքային տեղակայումը պայմանավորված է բացառապես փոստային երթուղիների և փոստային գործառույթների արդյունավետ և տնտեսապես ձեռնտու կերպով կազմակերպման նախադրյալներով: «ՀայՓոստ» ՓԲԸ-ում արդեն իսկ հաջողությամբ իրականացվել են Արագածոտնի, Գեղարքունիքի և Արարատի մարզերում խոշոր փոստային հանգույցների ստեղծման ծրագրերը, որոնց արդյունքում

նախկինում գոյություն ունեցող բազմաթիվ փոստային մասնաճուղերի փոխարեն նույն գործընթացներն այժամ հաջողությամբ իրականացվում են՝ համապատասխանաբար Աշտարակ, Սևան և Արտաշատ քաղաքներում ստեղված փոստային կապի խոշոր հանգույցների միջողով, այն է՝ Աշտարակի, Սևանի և Արտաշատի փոստային մասնաճյուղերի միջոցով:

«ՀայՓոստ» ՓԲԸ-ում պլանավորված գործընթացների շրջանակներում, որպես ծրագրի հաջորդ քայլ, նախատեսվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում ներդնել փոստային բաժանմունքների կառավարման նոր մոդելը և դրա նպատակով Սպիտակ քաղաքում ստեղծել «Հայփոստ հյուսիս» վարչական ստորաբաժանումը:

2. Ծրագրի նկարագրությունը

Սույն ծրագրի շրջանակներում նախատեսվում է նոր խոշոր փոստային կապի հանգույց հիմնել Սպիտակ քաղաքում, որն ապահովված կլինի տեսակավորման, ընդհանուր գրասենյակային և մեքենաների կառավարման տարածքներով: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև երկու, ամբողջությամբ նոր, փոստային բաժանմունք կառուցել Սպիտակ քաղաքում:

Սույն ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքի նորաստեղծ փոստային կապի օբյեկտները համալրված կլինեն ժամանակակից տեսակավորման հարմարավետ տարածքներով, որոնք ապահովված կլինեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ ներառելով համակարգիչներ, տպիչներ, գծանիշ կոդեր կարդացող սարքեր, կշեռքներ, կապահովվի օն-լայն կապ գլխամասի հետ:

Յուրաքանչյուր փոստային բաժանմունք համալրված կլինի անվտանգություն ապահովող նոր սարքավորումներով և տեխնոլոգիաներով՝ ինչպիսիք են. տեսախցիկներ, ծխի տվիչներ, հակահրդեհային, ահազանգման և հակավթարային անջատիչ համակարգեր և այլն:

Փոստային բաժանմունքները կունենան մանրածախ վաճառքի համար նախատեսված տարածք՝ ամսագրերի, թերթերի, գրքերի, գրենական պիտույքների և այլ ապրանքատեսակների վաճառք իրականացնելու համար: Ձեռք կբերվեն նոր ավտոմեքենաներ:

Սպիտակ քաղաքի նորաստեղծ փոստային բաժանմունքներում կմատուցվեն հետևյալ հիմնական ծառայությունները՝

- Փոստային ծառայություններ (նամակներ, ծանրոցներ, փաթեթներ, փոստային բացիկներ, արագացված փոստ ծառայություն և այլն),
- Փոստային ֆինանսական ծառայություններ (կոմունալ վճարների հավաքագրում, դրամական փոխանցումներ, պետական հարկերի և տուրքերի հավաքագրում, սոցիալական վճարների բաշխում և այլն),
- Կոմերցիոն մանրածախ առևտրի ծառայություններ (թերթեր, ամսագրեր և այլն),

- Ծառայությունների անկյուն (ինտերնետ, տպում, ֆաքս, պատճենահանում և սքանավորում),
- Բաժանորդագրություն հրատարակություններին,
- Կատալոգային վաճառք
- Այլ ծառայություններ:

3. Ակնկալվող արդյունքներ

Նախատեսվում է, որ «Հայփոստ հյուսիս»-ը կդառնա «Հայփոստ կենտրոն»-ից հետո երկրորդ մեծագույն վարչական միավորը: «Հայփոստ հյուսիս»-ի գլխամասի տեղակայման օպտիմալ վայրը հաջողության կարևորագույն գրավականներից է, քանի որ լոգիստիկայի ուղղակի ծախսերը կախված են զուտ վայրի ընտրությունից: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 80-90 աշխատատեղերի ստեղծում:

Սպիտակում «Հայփոստ հյուսիս»-ի կազմավորման ռազմավարական այս ծրագրի կարևոր նպատակներից և ակնկալվող արդյունքներից է նաև 1988թ.-ի Սպիտակի երկրաշարժից տուժած տարածքների վերակառուցումը և Սպիտակի բնակչությանը կյանքի բնականոն հունին վերաինտեգրելը:

4. Ներդրում

Այս ծրագրի համար նախատեսված ընդհանուր ներդրումը կազմում է մոտավորապես 500 միլիոն ՀՀ դրամ: Ծրագրի իրագործման արդյուքնում Սպիտակ քաղաքում **8500** ք/մ հողատարածքի վրա շահագործման կհանձնվի «Հայփոստ հյուսիս» փոստային խոշոր հանգույցը, որը ներառելու է «Հայփոստ հյուսիս» փոստային մասնաճյուղը, փոստային համապատասխան բաժանմունքը, փոստի տեսակավորման կենտրոնը, ավտոպարկը և բեռնային համալիրը: «Հայփոստ հյուսիս» փոստային խոշոր հանգույցից սպասարկվելու են Լոռու և Շիրակի մարզերը: Ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքում կառուցվելու են նոր փոստային բաժանմունքներ **317 ք/մ և 300 ք/մ** հողատարածքի վրա, որոնք համապատասխանելու են «Հայփոստ» ՓԲԸ-ում ներկայումս կիրառվող բոլոր պահանջներին ու ստանդարտներին:

Ծրագրի համար ներդրումները նախատեսվում են իրականացնել Սպիտակ քաղաքում համապատասխան հողմանասերի նկատմամբ «Հայփոստ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցման պահից: Իսկ «Հայփոստ հյուսիս»-ի շահագործումը նախատեսվում է իրականացնել Սպիտակ քաղաքում համապատասխան հողմանասերի նկատմամբ «Հայփոստ» ՓԲԸ-ի իրավունքների պետական գրանցման պահից սկսած տասներկուսից տասնութ ամիսների ընթացքում:

5. Անհրաժեշտ աջակցություն

Սույն ծրագրի իրականացման համար առաջնայինը Հայփոստի նոր փոստային բաժանմունքների տեղակայման համար համապատասխան հողամասերի հատկացման խնդրի լուծումն է: